ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 օգոստոսի 2021 թվականի N 240 - Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգիրք>> Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 127-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2021 թվականի հուլիսի 22-ի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 28-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 195-Ա որոշումը՝

ո ր ո շ ո ւ մ ե մ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի ավագանու համամասնական կարգով հերթական ընտրություն նշանակել 2021 թվականի հոկտեմբերի 17-ին:
2. Առաջարկել Դիլիջան համայնքի ղեկավարի պաշտոնակատարին. օրենքով սահմանված կարգով ապահովել ընտրության նախապատրաստման և անցկացման գործընթացը:
3. ՀՀ Տավուշի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետին. ընտրությունների նախապատրաստման և անցկացման ժամանակահատվածում համագործակցել թիվ 38 տարածքային ընտրական և տեղամասային ընտրական հանձնաժողովների հետ:

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

16.08.2021

X

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ք. Իջևան
16 օգոստոսի 2021թ.